

Առ Մնացակառայան

Ա Ն Տ Ի Պ Է Ջ Ե Ր

(ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ, ՇԱՄՉԻ ՄԵԼ-ԻՈ ԵՎ  
ԱՆԱՆՈՒՆ ԵՐԳԻԶ)

Մեր Մատենադարանում, ի շարս հազարավոր ձեռագրերի, պահպանվում է նաև հայանի սայաթ-նովագետ և բանահավաք Գևորգ Ախվերդյանի մեծածավալ «դավթարը»։ Չնայած այդ մատյանում գտնվող նյութերը հիմնականում ուսումնասիրված և հրատարակված են, բայց այնտեղ դեռ կաս նաև մի շարք այնպիսի արժեքավոր ստեղծագործություններ, որոնք մինչև օրս մնացել են անուշադիր։ Այս անգամ մենք հրատարակության ենք ներկայացնում այդ մատյանից Սայաթ-Նովայի, Շամչի Մելքոյի և անանուն երգչի մի քանի անտիպ բանաստեղծությունները։ Կատարված են մի քանի դիտողություններ և անհրաժեշտ մեջբերումներ՝ հիշյալ հեղինակների և նրանց ստեղծագործությունների հետ կապված որոշ խնդիրներ լուսաբանելու համար։

1. ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ

Ինչպես հայանի է, Գ. Ախվերդյանը ձեռնամուխ է եղել աշուղական և այլ արժեքավոր ստեղծագործությունների հավաքմանն ավելի վաղ, քան Սայաթ-Նովայի դավթարն ստանալը։ Հետագայում, երբ նա ձեռքի տակ ունեցավ այդ դավթարը, մի կողմ թողնելով արդեն հավաքված բոլոր նյութերը, զբաղվեց Սայաթ-Նովայի երգերի հրատարակման խնդրով։ Նա, հրատարակության ժամանակ, ուշադրություն չդարձրեց նույնիսկ այն մի քանի բանաստեղծությունների վրա, որոնք պատկանում էին Սայաթ-Նովային, սակայն ձեռք էին բերվել ուրիշ աղբյուրներից, և բավականացավ միայն վերջիններիցս մեկի մի տողի մեջբերմամբ՝ «Սաղրի քոչեր»-ի բացատրման կապակցությամբ։ Ախվերդյանի այդ վարմունքը պիտի բացատրել նրանով, որ նա, այլ աղբյուրներից հավաքած երգերը համեմատելով նրանց իսկականների հետ, որոնք գտնվում էին Սայաթ-Նովայի դավթարում, տեսավ առաջինների սոսկալի աղավաղված լինելը, առժամանակ ուշադրություն չդարձրեց դրանց, ինչպես և այն երգերի վրա, որոնք չնայած պատկանում էին Սայաթ-Նովային, բայց բացակայում էին նրա դավթարում։ Այժմ մենք ցանկանում ենք ուշադրության առնել Սայաթ-Նովայի այն մի քանի երգերի խնդիրը, որոնք գտնվում են Գ. Ախվերդյանի դավթարում<sup>1</sup>։ Դրանց ընդհանուր քանակը հավասար է վեցի, որոնցից երեքը (Գ. Ախվերդյանի դավթարում աճեռ. № 3751=413, 714 և 716 էջերում) Սայաթ-Նովայի Խ՛Ի, ԼԵ և Լ՛Ե երգերի աղավաղված տարբերակներն են և ցույց են տալիս, թե ինչպիսի մեծ փոփոխությունների կարող է ենթարկվել այս կամ այն ստեղծագործությունը՝ բանավոր ձևով բերն-բերան անցնելու և

<sup>1</sup> Այդ խնդիրն ուրիշների կողմից մինչև օրս արծարծված չի եղել։

առաջրի առնվելու դեպքում Այդտեղ կարելի է հանդիպել ոչ միայն այնպիսի աղավաղված բառերի («էդիարի», «մրնի՛ն», «մասադայ» և այլն), որոնք ոչ մի կերպ չեն հասկացվում (եթե չենք դիմում նրանց իսկական օրինակներին), այլև աղճատված, փոփոխված, երբեմն էլ ավելացված տողերի, տների ու կրկնակներին: Օրինակ՝ Լե երգի տարբերակն ունի այսպիսի կրկնակ յուրաքանչյուր տան համար:

«Կարմիր վարդ. բաց հս էլէ, բլբուլի հետ հանգ ես անում.

Երեսիդ խալը ծածկել ես, մազերդ խափանդ ես անում»:

Այս երգերը կարևոր նշանակություն կարող են ունենալ, նամանավանդ, մեծ բանաստեղծի երգերի ակադեմիական հրատարակության համար:

Դրանցից բացի, նույն դավթարում (Չեռ. № 3751) պահպանված են Սայաթ-Նովային պատկանող նաև հետևյալ բանաստեղծությունները (նշում ենք սկզբնատողերի առաջին մասերը).

- 1. «Բլբուլի պէս ձայն է տալի» . . . էջ 227.
- 2. «Վարդը էն ամսին բաց կուլի» . . . էջ 421.
- 3. «Գէլն ու չորանն մէկ գմէկու» . . . էջ 926.

1) Սրանցից առաջինը Սայաթ-Նովայի մինչ վերջերս անհայտ մնացած մի բանաստեղծությունն էր, որ համապատասխան ուսումնասիրությունը տպագրեցինք 1941 թվին՝ Մատենադարանի «Գիտական նյութերի ժողովածու»-ի № 1-ում: Դավթարում այդ երգի վերին աջ անկյունում, Սայաթ-Նովայի անվան դիմաց, գրված է «Ашух Банки»: Հրատարակության ժամանակ մենք այդ մակագրության առնչությունը չկարողացանք լրիվ մեկնել: Լե-տագայում մանրամասնորեն զննելիս պարզվեց հետևյալը: Ախվերդյանը ինչպես այդ, նույնպես ե մի շարք այլ ստեղծագործություններ վրի է առել աշուղ Բանդիի միջոցով, անելով համապատասխան նշումներ. այսպես, օրինակ. 225-րդ էջում գտնվող Ալլահվերդու երգի խորագիրն է. «Մուխամբազ Ալլավերդի, Со слов ашуха Банги». 232-րդ էջում՝ «Բիչիկ նուախ խոսկի վրայ Բանգին ասա: դիւանի». 236-րդ էջում կա. «Մուխամբազ. Լազաթ Սղլան. Ашух Банки»: Խնդիրն արդեն պարզ է. սակայն հետաքրքրական է հետևյալ դեպքը. 237-րդ էջում Քեչիշ Օղլու մի երգը, վերոհիշյալների ձևով, կրում է «Քեչիշ Օղլու Մուխամբազ. Банги» խորագիրը: Լետագայում՝ Մանե Ախվերդյանի հրատարակած «Հայ աշուղներ» ժողովածուի հրատարակիչները չկարողանալով մեկնարանել «Банги» բառի առնչությունը, տպագրության են հանձնել այդ երգը «Քեչիշ Օղլու-Բանդի» խորագրի տակ (նույնացնելով երկու տարբեր հեղինակներ):

2) Հաջորդ, «Վարդը էն ամսին բաց կուլի»... բառերով սկսվող երգը, չնայած հեղինակային պատկանելության ոչ մի հիշատակում չունի, բայց համապատասխան ուսումնասիրությունից պարզվում է, որ Սայաթ-Նովայի Մէ երգի մի անտիպ հատվածն է: Այդ երևում է թե չափից, թե ոճից, թե բովանդակությունից, թե ընդհանուր կառուցվածքից և թե, որ ամենագլխավորն է, ամեն տան շորրորդ տողում կրկնվող «Դու արի՛ն՝ կու սիրիս» կիսատողից: Դեռ ավելին. անտիպ հատվածի 4-րդ տողը, մեկ տառի տարբե-

<sup>1</sup> Այս բառը մենք «արիւն» ձևով չենք գործածում. «արյուն» բառից իսկապես կամար:

բությամբ, կրկնված է տպագիր հատվածի վերջում: Թե նորահայտ և թե տպագրված հատվածները բաղկացած են իննական տողից: Գ. Տ. Ալեքսանդրյանը, առաջին անգամ, հրատարակելով իր հայտնաբերած իննը տողերը, նրանցից կազմել է երկու տներ՝ հինգ և չորս տողանոց: Պարզվում է, որ նա տեսողությամբ կատարել է ոչ ճիշտ: Այժմ ձեռքի տակ ունենալով այդ երկու հատվածները, մենք աշխատեցինք վերականգնել նրանց իսկական օրինակին հարազատ թվացող մի տեքստ: Պարզվեց, որ այդ իսկական բանաստեղծութայն յուրաքանչյուր տունը բաղկացած է եղել չորս տողից: Ամբողջ բանաստեղծությունը կազմված է եղել ոչ պակաս վեց տնից: Այժմ լրիվ են առաջին և հինգերորդ տները, երկրորդ, երրորդ և վեցերորդ տները կորցրել են մեկական տող, իսկ չորրորդ տնից միայն մեկ տող է մնացել: Բացակայող տողերը փոխարինում ենք կետաշարով: Նշենք նաև, որ նորահայտ հատվածում գտնվող

«Քանի որ գուգե մարթն Եարփի վո՛ւնց կուլի վազն ինձնից բեղամաղ» տողը փոխ է առնված Սայաթ-Նովայի իր երգից (առաջին տան երկրորդ տող), միայն այն տարբերությամբ, որ «վազնից» բառը դարձել է «վազն ինձնից» և «վուռ»-ը «ուր»-ի է փոխվել և փոխել է տեղը:

Կարծում ենք նաև, որ ստացվող վեց տնից առաջ պակասում է առնվաղն մեկ լրիվ տուն, որն ունեցիլ է «ար» մասնիկով վերջացող ներքին (փակ) հանգավորում՝ բոլոր տողերի համար, որից որպես վկաններ մնացել են «եար», «տար» և մասամբ էլ «վարթ» բառերը (հաջորդ տներում):

Նպատակահարմար գտանք տպագրութայն հանձնել թե նորահայտ հատվածն այնպես, ինչպես որ պահպանված է այն, և թե այն տեքստը, որ մենք կազմեցինք՝ հիշատակված երկու հատվածների հիման վրա:

ՆՈՐԱՀԱՅՏ ԱՆՏԻՊ ՀԱՏՎԱԾԸ

Վարդը էն ամսին բաց կուլի, որ կու տանին դիմաց խնչը,  
 Քանի որ դուղէ չըմըչկի՝ պէտկական է վարդի շէչը,  
 Քիղ օսկէ ամբարչա պիտի, մի նըստի պղընձի մէչը.  
 Նով ջաւայհիր, անգին ալմագ, Եար, քու արիւը կու սիրիս:  
 Վարդն խէիւնումն կուլի նամ-նամ արխին սազ իլելով,  
 Կանանչ փոթուը բացվիլ է կարմիը ու գուլգազ ըլելով.  
 Վարդն ակուրվին մի շանց տա, Եար, քու արիւն կու սիրիս:  
 Քան որ գուղէ մարդն հարփի, վժւնց կուլի վաղն ինձնից բէղամաղ,  
 Ձիւ քաշում դոդ ու սափար, սազիրը քիզնից բէղամաղ...  
 Զեւ. № 3751, էջ 431.

3) Հաջորդ և վերջին բանաստեղծությունը՝ տպագրված ՄԶ բանաստեղծության ավելի ընտիր և համեմատաբար անթերի մի վարիանտն է: Տպագրված օրինակը հայտնաբերված է նույն Գ. Տ. Ալեքսանդրյանի միջոցով, որի մասին ինքը, հրատարակողն էլ նշում է, թե ունի ակնբախ թերություններ: Նորահայտ վարիանտն իրավունք է տալիս մտածելու, որ Գ. Ալեքսանդրյանի օգտագործած աղբյուրն ավելի ընտիր է եղել, քան Գ. Տ. Ալեքսանդրյանի օգտագործածը (այս բանաստեղծության մի այլ տարբերակն էլ տպագրված է «Բազմավէպ»-ի 1893 թվի 207-րդ էջում): Դիտողության կարգով նշենք, որ ինչպես 1941 թվին մեր հրատարակած

բակած «Բլրուլի պէս...» բանաստեղծութեան, նույնպէս և վերոհիշյալ «Վարդը էն ամսին...» բառերով սկսվող հատվածի մեջ մենք հանդիպեցինք «ամբարշտ» բառի գործածութեանը: Այդ բառը Սայաթ-Նովայի մյուս բոլոր երգերից և ոչ մեկի մեջ չի գործածված: Ինքը Ախվերդյանը, այդ բառի դիմաց լուսանցքում ուսերեն «КОТЕЛЪ» բառն է նշանակել: Քոչրքերենում «ամբարշտ»-ն փոքրիկ պահեստի նշանակութիւնն ունի: Թե ուրիշ ինչ իմաստով է գործածվում այն, չգիտենք: Ինքը՝ Սայաթ-Նովան էլ կարծես տարբեր իմաստներով է գործածել այն: Առաջին երգում դրում է.

«Ջիտումն օսկէ ամբարշա, եախե՛մ մարգարիտ շարիլ է», որտեղից պիտի եզրակացնել, որ ամբարշան պարանոցի զարդ է, սակայն երկրորդ բանաստեղծութեան մեջ ասում է.

«Քիզ օսկէ ամբարշա պիտի, մի՛ Որստի պզընձի մէշը»: Այստեղ ամբարշտ-ն, կարծես թե, այն իմաստն ունի, ինչպէս որ հասկացել է Ախվերդյանը (КОТЕЛ—կաթսա):

Կարծում ենք, որ ճիշտ կլինե՞ր թե առաջին և թե երկրորդ դեպքում ամբարշա բառի տակ հասկանալ պարանոցի զարդ, փոքրիկ տուփի կամ սրտածն ամանի ձեով՝ ոսկուց պատրաստված: Ինչ վերաբերում է

«Քիզ օսկէ ամբարշա պիտի, մի՛ նըստի պզընձի մէշը» տողին, պիտի ասել, որ այստեղ «մի՛ նըստի պզընձի մէշը» գրված է «մի՛ մնա պզընձի մէշը» = մի՛ մնա պզընձն զարդերով» նշանակութեամբ:

— (ՄԵ)

Վարթը էն ամսին բաց կուլի, վուր կու ասնին դիմաց խէշը,  
 Դանի վուր դուղէ՛ չըմըշկի—պետկական է վարթի չէշը,  
 Քիզ օսկէ ամբարշա պիտի, մի՛ նըստի պզընձի մէշը,  
 Նով ջաւահիր, անդին ալմաս, եար, քու արիֆն կու սիրիս

[ . . . . . ազ ըլիւով ]

Վարթը խէիւնու՛մն կուլի նամ նամ արխին սազ ըլիւով,  
 Կանանչ փոթուլը բացելի է՛ կարմիր ու դուլդազ ըլիւով,  
 Վարթըն ակորւին մի շանց տա, եար, քու արիֆն կու սիրիս:  
 Բանի դուղէ՛ մարթն հարփի, վուսց կուլի վազնից բէղամազ,  
 Ջիս քաշում դոզ ու սափար, սաղիրը քիզնից բէղամազ,

[ . . . . . զնից բէղամազ ]

Քաքաւը իս, դիւանս արա, թաք քու արիֆն կու սիրիս:  
 | . . . . .  
 | . . . . .

Ուր որ գնաս՝ ինձ էլ հիտոյ տար, քու արիֆն կու սիրիս:  
 Ակուալը ըլբուլ չի դառնա, քանի գուղէ վուր ախ անէ,  
 Ամեն ըռանգ ծաղկի մէջը կարմիր վարթը սիրեկան է,  
 Դուդ մարթն՝ մանգաղով գուքա, ձիք կուաա, տակոէն կու հանէ:  
 Մի թողնի ասկիտ քաղելու, վարթ, քու արիֆն կու սիրիս:

[ . . . . . ազ կանչելով ]

Բլրուլը սարեմէն գուքայ, իր լիղւովն բաղ կանչելով,  
 Սայաթ-Նովէն, վուր բեղրիլ է, շատին՝ էլից խաղ կանչելով,  
 Ով ջաւահիր, անդին ալմաս, եար, քու արիֆն կու սիրիս:

բ. (ՊԶ)

Գէլն ու չօրանն մէկգմէկու դէմ էլան.

Չօրանն ասաւ.— ես քու հալը շանց կուտամ,

Թէ բարով կու գրցեմ չօմբախիս ասկը:

Աղուէսի պէս ցընկցրնկալը շանց կուտամ:

Իէլն ասաւ.— մուլապ տամ՝ գետինը մրթնի.

էնդադայ կու ման գամ՝ բինէդ կու գտնիմ,

Ուրըն ուտիմ, ուրըն՝ կոտորիմ,

Առաւօտեան խէրն ու շտըր շանց կուտամ:

Չօրանն ասաւ.— Դուն հէնց գիտես գիշեր քձն ունիմ,

Ամէն օշխրի դըլխին մին-մին շուն ունիմ,<sup>1</sup>

Թէ կուգաս՝ կու բընըվիս, ես իխրալ ունիմ,

Էրկըթէ կըրկալը բըզիդ շանց կուտամ:<sup>2</sup>

Գէլն ասաւ.— մուլաա տամ ամալը ցամաքի:<sup>3</sup>

Ակոէքըս կու կպցընեմ օշխրի դըմակին,

Թէ բարով կու գրցեմ էս իմ քամակին,

Առաւօտեան դիմաց սարը շանց կուտամ:

Սայեաթ—Նօվէն ասաւ.— ես կարմիր կով եմ.

Գովկիթըս կօտրած է, հարսի հետ խոօվ եմ.

Իէլի հետ բան շունիմ, չօրնին կու գովեմ,

Մին անգամ կաթնի համը շանց կուտայ:

2. ՇԱՄՁԻ ՄԵԼՔՈ

Շամչի Մելքոյի մինչև օրս ապագրված բանաստեղծութիւններն ու նրանց վարիանտները կարելի է տեսնել «Քնար հայկական»-ում (էջ 564), Ախվերդյանի «Հայ աշուղներ»-ում (265, 267, 269, 271, 273, 275, 490), Գ. Տ. Աղեքսանդրյանի «Թիֆլ. մա. կյանք»-ում (36, 40, 42, 43), «Գրական թերթ»-ում (1934 թ. № 18), Գ. Թարվերդյանի «Հայ աշուղներ»-ում (էջ 23) և Հայկ. ՍՍՌ Ակադեմիայի «Տեղեկագրի» 1944 թվի № 5-ում:<sup>5</sup> Նույն հե-

<sup>1</sup> Գ. Տ. Աղեքսանդրյանի հրատարակած օրինակում այս առջն այսպես է. «Մէ աճկու ու աճկուն քու կոճէն (կոյովն) ունիմ»: Թանթութիւն մեջ հրատարակողը նշում է. Այս առջը լսել եմ այսպես. «Ամեն զոշի գլխին մէ-մէ շուն ունիմ», որը համապատասխանում է նորահայտ օրինակին:

<sup>2</sup> Համարաբար այս առջը եղել է մոտավորապես այսպես. «բըզիդ էրկըթէ կըրկալը շանց կուտամ»:

<sup>3</sup> «Յամաքի» բառին գուզընթաց գրված է նաև «ծըմակի» բառը:

<sup>4</sup> Այս բանաստեղծութիւնը ընդհանուր չափն է 4—4—3. մի բանի տեղ նկատվում են խախտումներ:

<sup>5</sup> «Տեղեկագրի» այդ համարում պրոֆ. Լ. Մելիքսեթ-Քեկը Շամչի Մելքոյի երգերից բացի՝ հրատարակել է նաև ուրիշների երգերը, որոնց մասին, ի միջի այլոց, արժե նշել հետևյալը. Հրատարակողը խոսելով Ջահել Օղլանի մասին, ասում է. «Սրա ստեղծագործութիւնից ցարդ հայանի էր 4 խաղ», ցույց տալով որպես աղբյուր «Հայ աշուղներ» II, 1903. Նշենք, որ հարգելի պրոֆեսորի ուշագրութիւնից վրիպել են նույն աղբյուրի հավելված բաժնում հրատարակված նույն աշուղի կս 5 խաղերը (ընդամենը 9 երգ. հենց այդքան էլ կա Ախվերդյանի ձեռագիր դավթարում):

Անասկանալի է նաև այն, թե ինչու պրոֆ. Լ. Մելիքսեթ-Քեկը այդտեղ հրատարա-

գինակի մասին արժեքավոր ուսումնասիրություն ունի նաև հանգուցյայ Գ. Ասատուրը (ՀՍԽՀ Պատմության և Գրականության Ինստիտուտի «Տեղեկագիր», 1938 թ. 1 գիրք)։

Գ. Ախվերդյանի դավթարում գտնվող՝ Շամշի Մելքոյի տպագրված բանաստեղծությունների շարքից դուրս է մնացել մի ուրիշ սիրո երգ, որը մինչև օրս մնացել է անտիպ։ Այդ երգը բաղկացած է չորս ութտողյա տներից (ընդամենը 32 տող)։ Վերջին ասան մեջ հեղինակը երկու անգամ հիշատակում է իր անունը։

Տպագրության ներկայացնելով այդ երգը, նպատակահարմար ենք գտնում կանդ առնել Շամշի Մելքոյի մյուս երգերից մի երկուսի հետ կապված որոշ խնդիրների վրա։

1. Գ. Տ. Աղեքսանդրյանի հրատարակության մեջ տեղ գտած «Շամշի Մելքոն տեսաւ երազ» տողով սկսվող քառատողն առանձին բանաստեղծություն չէ (ինչպես սովորաբար թվարկում են նրա մասին խոսելիս), այլ՝ «Քաղթէն գնացի Մառնէու» տողով սկսվող երգի վերջին տունը (տես Գ. Ախվերդյանի դավթարում 15-րդ էջը և այնտեղից հրատարակված «Հայ աշուղներ»-ի 275-րդ էջը)։

2. Շամշի Մելքոյին է պատկանում նաև Դարբեղիար մականունով հեղինակի «Մէ տարի գնացինք Զիթախենց բաղը» տողով սկսվող բանաստեղծությունը։

Գարդալով այդ տողը, ընթերցողն սպասում է, որ հաջորդ տողերում նկարագրվի մի դեպք՝ կապված այդ այցելության հետ։ Սակայն այնտեղ նկարագրվում է ոչ թե մի դեպք, այլ մի ամբողջ տարի՝ իր բոլոր մանրամասնություններով։ Այսպես.

«Օրն իրիք անգամ կոխ ին գալի [այդ այգում—կուզոն ու կաղը]

Բուխկը գլուխ չէրիտ, չէկաւ գազարը...  
Շատ շալիչ էկանք, չը դուս էկու արիւր...  
Տարին բարդաշտ էլաւ, չէրիտ սհարին...  
Մառիբը շոքիւ է, չէկաւ դուլարին...  
Հիդնուհիղը կուտլոյացաւ խիարը...» և այլն։

Ան աոյս ամբողջ նկարագրությունը ոչ մի կերպ չի համապատասխանում «Մէ տարի գնացինք» բառերի իմաստի հետ։ Մենք կարծում ենք, որ այդ տողի մեջ աղավաղված է «գնացինք» բառը։ Այն, ամենայն հավանականությամբ, եղել է «գնեցինք»։ Ինչպես գիտենք, Շամշի Մելքոն եղել է խոշոր միջոցների տեր և նույնիսկ ճորտատեր։ Շատ հնարավոր է, որ նրանց ընտանիքը մի տարի գնել է Զիթախենց այգին։ Իսկ Զիթախենք էլ՝

կած բանաստեղծություններից վերջին երկուսը գեանգել է Անանուն երգիչն իբրագրի առ կրք այդ սույս բանաստեղծություններից երկուսի էլ վերջին տողերում նշված են հեղինակի՝ «Մտեփանի» և «Ալմզարովի» անունն ու ազգանունը։ Կարծում ենք, այդ երկուսն էլ ավալ գեպում օգտագործված ձեռագրի գրիչ «Մտեփան Դավիդովի Ալմզարովի» ստեղծագործություններն են (Այս Ալմզարովը եղել է հայտնի բժիշկ, որի մի քանի բժշկարանները պահպանվում են Մատենադարանում)։

՝ Տես Գ. Ախվերդյանի «Հայ աշուղներ» և Գ. Տ. Աղեքսանդրյանի «Թիֆ. մա կյանքը»։ Նշենք, որ առաջինն աղավաղված հեռագր ունի, իսկ երկրորդն բնօր է, ուր գաղթ-գիտ-ը (գոնէ-գուուը) հեղինակի անուն չէ։

պիտի որ աղքատ ընտանիք լինեին, որ չկարողանալով մշակել իրենց տղ-  
գին, մի տարի վաճառել են այն: Ահա կապալով վերցված այդպիսի այգու  
հետ կապված «բարգաշա» տարուց է, որ արանջում է բանաստեղծը: Այգ  
բանաստեղծութան մեջ կա մի տող.

«Իս իմ տարակուսած աղին ինչ անիմ . . . »

Այս տողի մեջ գտնվող «աղին» բառը մենք չուք ուղում հասկանալ  
աղա (տեր) իմաստով, որովհետև աղան (տերը, հարուստը) տվյալ դեպքում  
ինքը Շամչի Մելքոն է եղել. նա ինքը տեր ունենալ չէր կարող, քանի որ  
ինքը ծառա չի եղել: Մնում է այդ բառն այլ կերպ հասկանալ: Մենք կար-  
ծում ենք, որ այդ բառը պիտի հասկանալ որպես հատուկ անուն («Աղին»  
— Աղա) և դրա համար ունենք միանգամայն անվիճելի հիմք նախ՝ վերո-  
հիշյալ պատճառը և ապա՝ հետևյալ հանգամանքը:

1796 թվին դեպի Թիֆլիս Աղա Մահմադ խանի կատարած սոսկալի  
արշավանքների մասին մեր հավաքած մի շարք խիստ կարևոր փաստաթղթ-  
թերի մեջ կա նաև մի փոքրիկ փաստաթուղթ, որը և զետեղում ենք ստորև:

«Ի ներքոյ թուոյս քանի ամաւ յառաջ, Տէրտէրի որդի Առաքէլն, ի  
խղճալի յառնէ իմմէ, Չիքախեց և Աղայե, հարիւր և երեսուն թումանի  
ապրանք առնելով, աստ՝ ի Թիֆլիզ, սանաթ է տալիս մուղէթով, որ ըստ  
իւրում պայմանադրեալ ժամանակին վճարեսցէ անպատճառ. որոյ գնացեալ  
ի յԱժդարխան և մնալով անդէն ի միջոց ինչ անցանելով անդր. քան՝ ղեղեալ  
պայմանն իւր, զոր ոչ վճարեալ զդրամ՝ տուեալ ստնաթին իւրոյ: Մինչ զի  
նաչար մնալով խղճալի առն իմոյ Աղային, զկնի միջոցի զբարաթագիրս  
յղեալ անցեալ մուղաթին իւրոյ՝ ի ձեռն միոյ զրկցի՝ Թիֆլիզցի Սաաեսենց  
պարոն Յօնանին, որոյ գնացեալ, ղերեսուն թուման առեալ ի յԱռաքէլէն  
ի կողմանէ իւրոյ հարիւր և երեսուն թուման սարմյեայ պարտուցն և ան-  
ցեալ մուղէթի նորին և յայնմհետէ մնացեալ այնպէս՝ մինչև ցարդ: Եւ արդէն  
վասն ծովացեալ մեղաց մերոց, մինչ սոյն ձախորդական ղիպուածս պա-  
ասանեալ քաղաքիս մերոյ և զխղճալի զայրն իմ՝ Աղայն սպանեալ. զբոլոր  
գինչ և զկայսն մեր ի կորուստ և յափշտակութիւն գնացեալ, և գսանաթն  
յիշեալ Առաքէլին ևս զհետ ընչից մերոց կորնչեալ: Ի սոյն բանիս ճշգրտիւ  
վերահասուացն և իսկապէս գիտողացն առաջի աստուծոյ զվկայութիւն  
խնդրեմ:

Ձերում գերագանցութեան ամենավարան աղախիմ և օտից մօխիր,  
խղճալի Աղայի կողակից, տրտում Թիմաթիմ:

1796 թ նոյեմ. 6:

Ձեռ. № 8216. Թերթ 132 ր.

Գարծում ենք՝ հենց այս Չիթախենց Աղան է, որ մի տարի իր այգին  
օգտագործման է տվել Շամչի Մելքոյին, և այդ մեկ տարվա մասին է, որ  
վերջինս դրել է իր հիշատակված բանաստեղծությունը: Թե երբ է կատար-  
վել դեպքը, զժվար է ճշգրիտ որոշել, սակայն մի բան պարզ է, որ  
այն կատարվել է նախքան 1796 թիվը. հետևապես՝ Շամչի Մելքոյի այդ  
բանաստեղծությունն էլ գրված պիտի լինի 1796 թվից առաջ:

- 1) Քո էջխեմէն հիւանդացայ, այ գողալ,  
 Պաակերբոյ պովելի է, աննման ես դուն:  
 Աննման ես, այ գողալ,  
 Իսկի չունիս թայ գողալ,  
 Քո էջխեմէն էրվում եմ,  
 Ես կանչում եմ վայ, գողալ:  
 Խափանդներդ սրտիս դիպաւ, չայ գողալ,  
 Էդ քու նազով թաք իմ հոգին հանես գուն:
- 2) Հոգիս հանես, արի ինձ մէ բանմ արա,  
 Բէմուրվադ, քոյ բերնեմէն կանչում եմ հարիայ:  
 Սիրտս արել ես եարայ  
 Զիկարս՝ փարա—փարայ,  
 Էդ քու անուշ խօսքերն  
 Աշխարհքին բարերար տյ:
- Արի, գողալ, էլ մի ման գայ հաւարայ,  
 Ուր որ գնաս՝ ինձի հեադ տանիս դուն:
- 3) Հեադ տանիս նոքարի պէս, դուլի պէս,  
 Մոցումրս պահեմ քեզ թայիզուլի պէս:  
 Գլկում իս կուլի պէս,  
 Խօսում իս բուլբուլի պէս,  
 Անուշ ձէնդ չեմ լսում,  
 Ես դառել եմ խուլի պէս:  
 Խափանդներդ սրտիս դիպաւ դուլի պէս,  
 Խնդրում եմ, որ էդպէս բան էլ չանես դուն:
- 4) Էդպէս բան էլ չանես, թաղայ ջիւան ես,  
 Մոցդ բաղչայ բաղ այ, ինձ սէյիր տանիս:  
 Մազով հոգիս կու հանես,  
 Մկամ դուն հաղեհան ես,  
 Շամչի Մելքոն խնդրում է՝  
 Ինչ կուլի մե ունիմ անիս:  
 Նազ չծախես, ինձ վրէն նազ չանես,  
 Շամչի Մելքոն այ, դարտ բիւան իս:

Ձեռ. № 3751, էջ 716—717

#### ԱՆԱՆՈՒՆ, ԵՐԳԻՉ

Ախվերդյանի նույն մատյանում կա մի գողտրիկ բանաստեղծութիւն՝ խաղողի ե գինու մասին, որը, դժբախտաբար, ինչպես երեւում է, թերի է և գուրկ՝ հեղինակի անվան հիշատակումից: Մակայն եղածն էլ բավական է գաղափար կազմելու նրա հեղինակի ճաշակի ու վարպետութեան մասին: Այդ երգը գտնվում է հիշատակված մատյանի 407 էջում. հաջորդ երգը Նազուր Օղլի Կարապետի մի թերի ստեղծագործութիւնն է: Առաջին հայացքից թվում է, թե դրանք մի ամբողջութիւն են, բայց իրոք այդպես չէ: Այս երգի տողերից մեկում ըստ երևույթին աղավաղված է «Ալլավերդի բառը, որը որոշ հիմք է տալիս ենթադրելու, թե դա աշուղ Ալլահվերդու



երգերից է: Համոզիչ ոչինչ ասել չենք կարող: Մենք այդ երգն առայժմ  
հրատարակում ենք որպես անհայտ հեղինակի անտիպ երգ: Աղավաղում-  
ներն ակնբախ են: Կան նաև չհասկացվող, անվերծանելի տողեր և բառեր:

• •

Բարով տեսինք քեզի, խաղող, ես քո ստեղծողին մեռնիմ,  
Անուշ գինին քեզմէն կուլի, ես նորա խմողին մեռնիմ,  
Ո՞րդածէմէն էս բահամ կամ, քոյ պողաբեր հողին մեռնիմ,  
Կանանչած քոյ տերևն, քաշ ինկած խաղողին մեռնիմ,  
Երրորդութեանն նման ես, քո քարու տուողին մեռնիմ,  
Եարար հնց կուլի իմանամ, ես քու սահմանողին մեռնիմ:

Բարով տեսինք [քեզի, խաղող, ես քո ստեղծողին մեռնիմ,  
Անուշ գինին քեզմէն կուլի, ես նորա խմողին մեռնիմ]:

Ինչ սիրում ես էնպէս մարդըն, ով բարի է քեզ մոտ կալի,  
Կու խմի զարար քեզի, էլ աւելի խելք էս տալի,  
Ամմա էն մարդըն ազան է, ով կուխմէ քեզ վատ խիալի,  
Գլխաւէր նորան շուռ կուտաս, կշինէս դու ամօթալի,  
Էսքան հուքմը ու զօրութիւն քեզի բարգեողին մեռնիմ:

Բարով տեսինք քեզի, խաղող, ես քո ստեղծողին մեռնիմ,  
Անուշ գինին քեզմէն կուլի, ես նորա խմողին մեռնիմ]:

Առանց [ր] քեզ հնց գող կտնին խանի, բէզի մարաքումըն,  
Դուն չիւած տիղ՝ մաթալ կուլնի քահտնտյն պատարագումըն,  
Իլլահի քի ձեռնիս բռնած մէ-մէ շանց տամ ճրտգումըն,  
Եագութի պես ճահար կտաս՝ փիալայիզ պարակումըն,  
Արի աուրս կանք մեք քանի մարգ, նստենք քոյ վաղիզ տակււմըն,  
Շուշատ լիքը իլի արած, խորովածն էլ կրակումըն,  
Կէս թունկիդ հինգ օսկի ասէն, հալալա, քոյ ծախողին մեռնիմ:

[Բարով տեսինք քեզի, խաղող, ես քո ստեղծողին մեռնիմ,  
Անուշ գինին քեզմէն կուլի, ես նորա խմողին մեռնիմ]:

Իլաքի [թէ] մեկ քանի մարդ հաւտքված կնում են չուըն,  
Մէկ զօծեմէն զորոված, մեկ զօցեմէն էլ քերում են զօլըն,  
Մէկ էլ տեսար հառտյ տվին Ալլափերդի եագչի Խօլըն,  
Երանիմէն մարգուն, ով [որ] կու խմէ քու չափաւորն,  
Ես՝ ջահիլ, մէկ ժամանակ, խմել եմ սորա բօլորն,  
Չունքի որ բօփալու եմ, ինձ սապըր տուողին մեռնիմ:

Բարով տեսինք քեզի, խաղող, ես քո ստեղծողին մեռնիմ,  
Անուշ գինին քեզմէն կուլի, ես նորա խմողին մեռնիմ]:

Պարտիզ գուրբան, գինի, աճախայ լազար իս՛ առա չոգին,  
 Բառկիմ վազից տակուժըն, յօժար տամ կամօք իմ հոգին,  
 Ինչ վաթիպ և մէջլիսում հարեաթ կոնեն օազի գոգին  
 Թէ դու չիլած մէջլիսում չեն կարող մե շունկուր քոքին,  
 Որքան որ քահանա—բան իլնի, դու իլած տեղ կու նորոգին,  
 Էսքան հուքմը (ու գորութիւն քեզի բարդեողին մեռնիմ)։

[Բարով տեսնք քեզի, խաղող, ես քո ստեղծողին մեռնիմ,  
 Անուշ գինին քեզմէն կուլի, ես նորա խմողին մեռնիմ]։

Ձեռ. № 2751, էջ 607—608.

՝ Այս և մյուս ընդգծված բառերը թերևս հնարավոր լինի նաև այլ կերպ վերծանել. մեզ այդպես ավելի հավանական թվաց։ Ուղղագրութիւնը մեռագրինն է։